

Կրժքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման ուղեցույց առաջնային օղակի բուժքույրերի համար

40 տարեկանից բարձր բոլոր կանայք տարեկան առնվազն մեկ անգամ պետք է անցնեն կրժքագեղձերի հետազոտություն: Ամեն ամիս 40 տարեկանից բարձր յուրաքանչյուր կին պետք է կատարի կրժքագեղձերի ինքնազննում:

Սկրինինգի հանճնարարականը

Առաջնային օղակի բուժքրոջը հանճնարարվում է կանանց սովորեցնել կրժքագեղձի ինքնազննման տեխնիկան: Հանճնարարվում է 40 տարեկան և բարձր տարիքի ԲՈԼՈՐ կանանց տարեկան մեկ անգամ՝ կանխարգելիչ այցի ժամանակ ենթարկել կրժքագեղձի կլինիկական հետազոտության: Բարձր ռիսկի առկայության կամ զննման կասկածելի արդյունքի դեպքում առաջնային օղակի բուժքույրը պետք է այդ մասին տեղեկացնի առաջնային օղակի բժշկին, որը կնոջը կարող է ուղեգրել մասնագրաֆիայի: Սկրինինգի արդյունքները պարտադիր գրանցվում են ամբուլատոր բժշկական քարտում:

Սկրինինգի նպատակը

- կրժքագեղձի հիվանդությունների վաղ հայտնաբերում և բուժում
- կրժքագեղձի ծանր հիվանդությունների և դրանց բարդությունների կանխարգելում
- կրժքագեղձի քաղցկեղից մահացության ցուցանիշների բարելավում:

Սկրինինգի կատարման կարգը

Կրժքագեղձերի ինքնազննման լավագույն ժամանակը դաշտանից մեկ շաբաթ անց է, որովհետև դաշտանային ցիկլի այդ ժամանակամիջոցում առավել քիչ հավանական է կրժքագեղձերի լցվածությունը: Հիստերեկտոմայից կամ դաշտանադադարից հետո կրժքագեղձերի ինքնազննումը ցանկալի է կատարել ամեն ամսվա սկզբին:

1. Հայելու առջև կանգնած պետք է զննել կրժքերը՝ ուշադրություն դարձնելով նրանց չափի և ձևի փոփոխություններին՝ ներառյալ նաև մաշկի փոփոխությունները: Չննումը իրականացվում է սկզբից ձեռքերը դրված գոտկատեղին, հետո՝ ձեռքերը ծոծրակին:
2. Պատկած կամ կանգնած դիրքում ձախ ձեռքը դրված ծոծրակի տակ՝ աջ ձեռքի մատներով շոշափել ձախ կուրծքը, որպեսզի զգացվի կրժքագեղձի շոշափվող ողջ մակերեսը միաժամանակ: Մատները շրջանաձև շարժումներով տեղաշարժելով հետ և առաջ՝ ամուր սեղմել կրժքագեղձը, որպեսզի զգացվի հյուսվածքի տեղաշարժը մաշկի տակ:
3. Այնուհետև զգուշությամբ սեղմել պտուկը և նրա շրջակա տարածքը համոզվելու համար, որ արտադրություն չկա:
4. Կրկնել առաջին երեք գործողությունները աջ կրժքագեղձի համար:

Կրժքագեղձի պնդության, ցավոտության, ատիպիկ լցվածության կամ թորշոմության, մաշկի փոփոխության, հյուսվածքի շարժունակության դժվարության, պտուկից արտադրության, պտուկի ներանկման դեպքերում ցուցված է կրժքագեղձի լիարժեք կլինիկական հետազոտություն՝ ներառյալ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները:





Կրժքագեղձի քաղցկեղի ռիսկի գործոններն են՝

- սեռը /իգական/,

- տարիքը /40-65/,
- ժառանգականությունը /կրծքագեղձի հիվանդությունների դրական անամնեզը/,
- գիրությունը,
- բարձր սոցիալ-տնտեսական կարգավիճակը,
- ձվարանի կամ էնդոմետրիալ քաղցկեղի առկայությունը,
- առաջին հղիությունը՝ 30 տարեկանից բարձր
- մենարխեն՝ մինչև 12 տարեկանը
- դաշտանադադարը՝ 50 տարեկանից բարձր:

Պետք է հիշել, որ 50-ից բարձր և մինչև 70 տարեկան կանանց համար ցուցված է մամնոգրաֆիկ հետազոտության իրականացումը 2 տարին մեկ անգամ:

Կրծքագեղձերի ինքնազննման տեխնիկան






Քաղցկեղի առաջացման /հանդիպման/ տարածքի րստ

Կրծքագեղձի լիմֆատիկ հանգույցները

Ինքնազննման ժամանակ օգտագործելու երեք միջին մատների

Զսպանակի մեթոդը





Ցանցային մեթոդը

Երկու ձեռքերի մեթոդը

Զննելը աջ կուրծքը ձախ ձեռքով

Կատարելը խորը շոշափում



Մակերեսային շոշափում

Զննելը կա՞ն արդյոք տեսանելի փոփոխություններ

Զննելը կա՞ արդյոք արտադրություն պտուկից

Ամեն ամիս կատարելը զննում